(Ծննոց, ԼԵ. 16)։ Հոն հասնելով Ռաքէլ Բենիամինը ծնաւ և մեռաւ տղաբերքէն։ «Մեռաւ Ռաքէլ և թաղեցաւ ի ճանապարհին Եփրաթայ, այն իսկ է Բեթղեհէմ. և կանգնեաց Յակոբ արձան ի վերայ շիրմին նորա. այն է արձան շիրմի Ռաքելայ մինչև ցայսօր ժամանակի» (Ծննոց, ԼԵ. 19–20)։

Յովսեպոս կ'ըսէ թէ Ռաքէլ թաղուեցաւ «Եփրաթայի մօտ»։ Թալմուտները համաձայն են դնելու թէ անոր գերեզմանը Բեթղեհէմի մօտ էր։ Որոգինէս, Եւսեբիոս և Յերոնիմոս կը յիշեն թէ Ռաքէլի գերեզմանը Բեթղեհէմի շրջակայից մէջ է։ Պորտոյի ուխտաւորը (333) կը նշանակէ թէ գերեզմանին վրայ կառուցուած «յիշատակարանը» Երուսաղէմէն չորս մղոն հեռու է, և երկու մղոն՝ Բեթղեհէմէն։ Արգուլֆ (670) մեզ կը տեղեկացնէ թէ բուրգի ձև ունի ան։ Յետոյ Թէոտորիք, Բենիամին տը Թոնտէլա և Իտիրիսի՝ ապրաբ աշխարհագիրը, երեքն ալ ԺԿ. դարուն, կ'աւելցընեն թէ բուրգը կազմուած էր տասներկու քարերէ որ կը ներկայացնէին Յակոբի տասներկու որդիները կամ Իսրայէլի տասներկու ցեղերը։ Խաչակիրները, ըստ միևնոյն ճանապարհորդներուն՝ այս յիշատակարանին վրայ կանգնեցին քառակուսի շէնք մը եօթը մէթր կողմնակի որմակամարներով իրարու հետ կապուած չորս սիւներով, երեք մէթր բացուածքով, եւ վեց մէթր բարձրութեամբ և ամբողջին վրայ կայ կամար մը։ ԺԵ–ԺԶ դար տասներկու քարերը անհետացան և դամբարանը քանի մը անգամ նորոգուած է։ 1560ին Երուսաղէմի կառավարիչը չորս կամարները քարով գոցել տուած է և շէնքին տուած է իսլամա-

---

պէս այլուր եւս կը յիշուի (Ծննոց, ԽԸ. 7)։